Ն. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻՐԱՔԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Պաղեստինյան պրոբլեմն իր ներկա տեսքով գոյություն ունի 1948 թվականից։ Հետագա տարիներին նա ավելի է ճյուղավորվել և սրվել։

Հայտնի է, որ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1947 թ. նոյեմբերի 29-ի որոշմամբ անգլիական ենթամանդատային տերիտորիա Պաղեստինը բաժանվեց երկու մասի։ Մի մասը՝ 14,1 հազ. քկմ հատկացվեց հրեաներին իրենց պետությունը ստեղծելու համար, իսկ մյուս մասը՝ 11,1 հազ. քկմ հատկացվեց արաբներին Պաղեստինի անկախ պետություն ստեղծելու համար։ Սակայն ՄԱԿ-ի այդ որոշումը իրականացվեց միայն այն մասով, որքանով այն վերաբերում էր հրեական պետություն ստեղծելուն։ 1948 թ. մայիսի 15-ին հռչակվեց Իսրայելի պետությունը։ Այդ նույն օրը պատերազմական գործողություններ սկսվեցին մի կողմից Իսրայելի, իսկ մյուս կողմից Սիրիայի, Եգիպտոսի, Անդրհորդանանի, Իրաքի և Լիբանանի միջև։ Իսրայելին պատերազմ հայտարարեցին նաև Սաուդյան Արաբիան և Եմենը։

Արաբա-իսրայելական առաջին պատերազմի ընթացքում Իսրայելը գրավեց լրացուցիչ 6,6 հազ. քկմ տարածություն այն տերիտորիայից, որ ՄԱԿ-ի որոշմամբ հատկացվել էր Պաղեստինի արաբական պետություն ստեղծելու համար։ Մնացած մասը Իսրայելն օկուպացրեց 1967 թ. հունիսյան ագրեսիայի ժամանակ։

Այսպիսով, Իսրայելի սիոնիստական ղեկավարները, իրագործելով իրենց ծավալապաշտական քաղաքականությունը, լրիվ զավթեցին Պաղեստինի արաբական պետության ստեղծման համար հատկացված տարածքը, իսկ պաղեստինցի արաբների մեծամասնությանը տեռորի, սպառնալիքների և բռնությունների ուղիով արտաքսեցին իրենց տներից, բնակավայրերից ու քաղաքներից և վերածեցին գաղթականների։

Պաղեստինյան ժողովրդի ողբերգության մեջ Իսրայելի սիոնիստական ղեկավարության հետ համահավասար պատասխանատու են ԱՄՆ-ի

կառավարող շրջանները, որոնք ամենալայն քաղաքական, տնտեսական ու ռազմական օգնություն են ցույց տալիս Իսրայելին, հովանավորում ու խրախուսում նրա ագրեսիվ քաղաքականությունը հարևան արաբական երկրների նկատմամբ։ Իսրայելը դարձել է ԱՄՆ-ի հենակետը Մերձավոր արևելքում, որի օգնությամբ ամերիկյան իմպերիալիստները ձգտում են ամրապնդել իրենց ազդեցությունը ստրատեգիական տեսակետից այդ կարևոր շրջանում, հարվածել արաբական ազգային-ազատագրական շարժումներին, վերացնել արաբական առաջադիմական վարչակարգերը և կանխել արաբական երկրների զարգացումը առաջադիմական վերափոխումների ուղիով։

Ահա այսպես ծագեց պաղեստինյան պրոբլեմը։

Ներկա հոդվածում քննության է ենթարկվում Իրաքի դիրքորոշումը պաղեստինյան հարցում 1968 թ. հետո, երբ Իրաքում կրկին իշխանության գլուխ եկավ արաբական սոցիալիստական վերածնության՝ Բաաս կուսակցությունը։ Այս հարցը արևելագիտական պատմական գրականության մեջ ցարդ մնում է չլուսաբանված կետերից մեկը։

1968 թ. հուլիսի 17-ին Իրաքում հաստատված նոր վարչակարգը հարկադրված էր անմիջապես ճշտորոշել իր դիրքը պաղեստինյան պրոբլեմի նկատմամբ որպես արաբական բոլոր երկրների առջև ծառացած ամենասուր համազգային խնդիր։ Իրաքի ամենակարևոր քաղաքական փաստաթղթի՝ 1971 թ. ընդունված «Ազգային գործողությունների խարտիայի» մեջ հստակորեն սահմանված է, որ «սիոնիզմի օկուպացիայից Պաղեստինի ազատագրման պրոբլեմը հանդիսանում է արաբական պայքարի կենտրոնական հարցը»[1]։ Իսկ Իրաքի պրեզիդենտ, հեղափոխական ղեկավարության խորհրդի նախագահ Ահմադ Հասան ալ-Բաքրի* բնութագրմամբ «պաղեստինյան հարցը հանդիսանում է Իրաքի արաբական և միջազգային քաղաքականության առանցքը[2]»։

Իրաքի ղեկավարները պաղեստինյան հարցին այդքան մեծ տեղ էին հատկացնում ելնելով ոչ միայն պաղեստինյան ժողովրդի նկատմամբ թույլ տրված անարդարությունը վերականգնելու միտումից, այլև ուղղակի կապ տեսնելով դրա և արաբական աշխարհում ազատության ու առաջադիմության համար մղվող պայքարի միջև։ «Քանի որ,— ինչպես նշված է իրաքյան պաշտոնական փաստաթղթերից մեկում,—պաղեստինյան հարցը ամբողջովին կապված է արաբական հայրենիքի ազա-

---

* Ահմադ Հասան Բաքրը Իրաքի պրեզիդենտն էր 1968—1979 թթ., դրանից հետո այդ պաշտոնում նրան փոխարինեց Սադդամ Հուսեյնը։

տագրման, միասնության և սոցիալական առաջադիմության հետ, ապա հեղափոխության (իրաքյան—Ն. Հ.) ամբողջ քաղաքականությունը կենտրոնացված է պաղեստինյան հարցի վրա»[3]։

Սակայն Իրաքի դիրքորոշումը պաղեստինյան պրոբլեմի նկատմամբ ավելի խորը ըմբռնելու համար, մեր կարծիքով անհրաժեշտ է համառոտակի լուսաբանել երեք կարևոր հարցեր։ Առաջին, «պաղեստինյան պրոբլեմ» հասկացողության շրջանակները, ավելի ճիշտ, ինչ տերիտորիաներ պետք է ազատագրել իսրայելական օկուպացումից, երկրորդ, Իսրայելի, որպես պետության գոյության հարցը, երրորդ, ինչպիսի ուղիներով պետք է լուծվի պաղեստինյան հարցը։

Այս հարցերի շուրջը արաբական երկրների միջև չկա միասնական տեսակետ, մասնավորապես տարբեր է Իրաքի մոտեցումը։

Նախ, քննարկենք առաջին հարցը, տերիտորիալ, որն ամենակարևորն է։ Այս հարցի վերաբերյալ կա ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1967 թ. նոյեմբերի 22-ի № 242 բանաձևը, որը նախատեսում է իսրայելական զորքերը դուրս բերել 1967 թ. հունիսյան ագրեսիայի ժամանակ գրաված տերիտորիաներից,[4] այն է՝ Եգիպտոսին պատկանող Սինայի թերակղզուց, Սիրիայից խլված Գոլանի բարձունքներից, Հորդանան գետի արևմտյան ափից, որ մտնում էր Հորդանանի կազմի մեջ, և Ղազայի շրջանից։

Այս բանաձևի այդ և այլ սկզբունքների հետ համաձայնվեց արաբական երկրների ճնշող մեծամասնությունը՝ որոշ երկրներ անմիջապես, իսկ մի քանի երկրներ ուշացումով և որոշ տատանումներից հետո։ Այդուհանդերձ, Անվտանգության խորհրդի բանաձևին իրենց համաձայնությունը հայտնեցին Եգիպտոսը, Հորդանանը, Սիրիան, Լիբանանը, Սաուդյան Արաբիան, Քուվեյթը, Թունիսը, Մարոկկոն, Սուդանը և այլն։ Դա նշանակում է, որ նրանք համաձայն են վերականգնել այն սահմանները, որ գոյություն ունեին Իսրայելի և արաբական երկրների միջև մինչև 1967 թ. հունիսի 5-ի ագրեսիան։

Ի տարբերություն վերոհիշյալ արաբական երկրների, Իրաքը ժխտական դիրք գրավեց № 242 բանաձևի նկատմամբ[5]։ Իրաքի ղեկավարներն իրենց այդ դիրքը հիմնավորում էին նրանով, որ Անվտանգության խորհրդի բանաձևը դնում էր միայն 1967 թ. ագրեսիայի ժամանակ Իսրայելի կողմից գրաված արաբական տերիտորիաների ազատագրման հարցը։ Իրաքը հանդես էր գալիս ոչ միայն 1967 թ., այլև 1948 թ. գրաված տարածքների վերադարձման պահանջով։

Պրեզիդենտ Բաքրը 1968 թ. հուլիսի 27-ին ունեցած իր ելույթում

ուղղակի մատնանշեց, որ «մենք Պաղեստինի արաբների հարցին մոտենում ենք արմատականորեն, հասնելով մինչև 48 թ., երբ իսրայելական գաղութարարները սուր մխրճեցին արաբական հայրենիքի սրտի մեջ»[6]։ Իրաքի ղեկավարներն իրենց ելույթներում մշտապես շեշտում էին այդ գաղափարը։ Ելնելով դրանից, նրանք մերժում էին Անվտանգության խորհրդի ինչպես 1967 թ. № 242, այնպես էլ 1973 թ. № 338 բանաձևերը։ Այդ տեսակետը կրկին հաստատեց Իրաքի պրեզիդենտ Բաքրը 1975 թ. հուլիսի 17-ի ելույթում, շեշտելով, որ Իրաքը մերժում է երկու բանաձևերն էլ, քանի որ նրանք ճանաչում են սիոնիստական պետության գոյությունը և նրան են թողնում բոլոր այն տերիտորիաները, որ նա գրավել է մինչև 1967 թ.[7]։

Այս հարցում ցայտուն կերպով դրսևորվում է Իրաքի դիրքորոշման տարբերությունը արաբական մի շարք երկրների, մասնավորապես Եգիպտոսի և Հորդանանի դիրքորոշումից։

Ինչ վերաբերվում է երկրորդ հարցին, Իսրայելի գոյությանը որպես պետություն, ապա Իրաքի հանրապետության ղեկավարները Իսրայելի գոյությունը չեն համարում օրինական։ «Իսրայելի ոչ մի ճանաչում»— հայտարարեց Իրաքի արտաքին գործերի մինիստր Շեյխլին 1968 թ. օգոստոսի 8-ին, այսինքն՝ Բաաս կուսակցության իշխանության գլուխ անցնելուց մի փոքր անց։ Այս միտքը բազմաթիվ անգամ ընդգծված է իրաքյան պետական գործիչների հայտարարություններում և պաշտոնական փաստաթղթերում։ Իր զրույցներից մեկի ժամանակ պրեզիդենտ Ահմադ Հասան ալ-Բաքրը ընդգծելով, որ Իսրայելը ստեղծվել է իմպերիալիզմի կողմից, որպեսզի այն վերածի իր ագրեսիվ բազայի ուղղված արաբների դեմ, և շեշտելով, որ «Իսրայելի նպատակն է էքսպանսիան Եփրատից մինչև Նեղոս»[8], մատնանշեց. «մենք չենք կարող ճանաչել իսրայելական պետության գոյությունը արաբական հայրենիքի սրտի մեջ»[9]։ Այս հարցի մասին ավելի որոշակի և հստակ է սահմանված մի այնպիսի հեղինակավոր պաշտոնական փաստաթղթի մեջ, ինչպիսին Իրաքի «Ազգային գործողությունների խարտիան է»։ Նրանում ասված է, որ «Համազգային մակարդակով արաբական պայքարի գլխավոր նպատակը ռասայական ագրեսիվ սիոնիստական պետության վերացումն է»[10]։

Իրաքի դիրքն այս հարցում էապես տարբերվում է արաբական այն երկրների դիրքորոշումից, որոնք ընդունել էին Անվտանգության խորհրդի № 242 բանաձևը, որով ճանաչվում էր մերձավորարևելյան բոլոր պետությունների, այդ թվում և Իսրայելի անկախությունը, գերիշխա-

նությունը և պետական սահմանների ապահովությունը։ Այդ բանաձևին իրենց համաձայնությունը հայտնած արաբական երկրները ուղղակի կամ անուղղակի, փաստորեն ընդունում են Իսրայելի գոյությունը։

Իրաքի դիրքն այս հարցում ռեալիստական չէր։ Նա անտեսում էր ստեղծված իրադրությունը և հրեա ժողովրդի ազգային շահերը, թեև պետք է նշել, որ դնելով իսրայելական պետության վերացման հարցը, իրաքյան ղեկավարները երբեք հանդես չեն եկել հրեաներին ոչնչացնելու կամ ծովը թափելու կոչերով։ Այս հարցում իրաքյան տեսակետը շատ թե քիչ ամբողջականորեն ուրվագծեց պրեզիդենտ Բաքրը անգլիական ժուռնալիստ Գուրլեյին տված հարցազրույցի ժամանակ։ Բաքրը նշում է, որ «արաբների հաղթանակից հետո, այն տերիտորիաները, որ պատկանում էին պաղեստինցիներին, պետք է վերադարձվեն նրանց։ Այնուհետև իսրայելցիները և պաղեստինցիները կարող են ապրել կողք կողքի, օգտվելով հավասար իրավունքներից նոր պետության մեջ[11]»։

Իրաքի ղեկավարները գտնում էին, որ միայն արաբական բոլոր տերիտորիաների, այդ թվում և 1948 թ. գրավված տարածքների ազատագրումը հնարավորություն կստեղծի բոլոր պաղեստինցիների համար վերադառնալու իրենց հայրենիքը[12]։

Այսպիսով, Իրաքը պաղեստինյան հարցը դիտեց ոչ թե որպես գաղթականների հարց, որոնք արժանի են կարեկցանքի և օգնության, այլ իրենց երկիրը վերադառնալու և իրենց սեփական պետությունը ստեղծելու իրավունքի հարց։

Իրաքյան ղեկավարների կարծիքով, պաղեստինցիները իրենց հայրենիքը վերադառնալուց հետո, պետք է օգտվեն ինքնորոշման իրավունքից, իրենք պետք է որոշեն իրենց ճակատագիրը[13]։ Այդ հարցում նրանց վրա չպետք է ճնշում գործադրեն ինչպես օտարերկրյա, այնպես էլ արաբական երկրները։ Իրաքը կտրուկ կերպով դեմ էր «պաղեստինյան տարածքի մի մասի վրա ձևական մարիոնետային պետության ստեղծմանը»[14]։ Ղեկավարվելով այդ սկզբունքներով, Իրաքի ղեկավարները մերժեցին 1972 թ. մարտի 15-ին Հորդանանի թագավոր Հուսեյնի կողմից առաջ քաշված «Միացյալ արաբական թագավորության» ստեղծման ծրագիրը։ Ըստ այդ ծրագրի Հորդանանը և Հորդանան գետի արևմտյան ափը, այսինքն՝ Պաղեստինի մի հատվածը, պետք է միավորվեին մեկ թագավորության մեջ՝ Հուսեյն թագավորի մականի ներքո։

Հորդանանյան ծրագիրը խորը վրդովմունք առաջացրեց ամբողջ արաբական աշխարհում, այդ թվում և Իրաքում։ Արաբներն այն համարեցին հարված պաղեստինյան հարցին, դեռ ավելին, դավադրություն,

ուղղված պաղեստինյան դատի դեմ[15]։ Իրաքի Բաաս կուսակցության օրգան «աս-Սաուրան» հորդանանյան առաջարկը որակեց «պետական դավաճանություն»[16]։

Հանդիպելով այդպիսի միահամուռ ընդդիմության, Հորդանանը հարկադրված էր հրաժարվել իր առաջ քաշած պլանից։

Այժմ կանգ առնենք երրորդ հարցի վրա՝ ինչպիսի ուղիներով և միջոցներով Իրաքը հույս ունի հասնել պաղեստինյան պրոբլեմի լուծմանը։

Իրաքի ներկա ղեկավարությունը մերժում է հարցի խաղաղ կարգավորման հնարավորությունը։ Նրա կարծիքով խաղաղ կարգավորումը նշանակում է ճանաչել Իսրայելը և զրկել պաղեստինցիներին իրենց բնակավայրերը վերադառնալուց։ Իրաքի կառավարության այդ դիրքորոշումը պաշտոնապես հաստատվեց «Ազգային գործողությունների խարտիայում» և Բաաս կուսակցության 8-րդ մարզային համագումարի որոշումներում[17]։

Իրաքը հանդես է գալիս լայն և համընդհանուր զինված պայքարի պահանջով։ «Զինված պայքարը — նշված է «Ազգային գործողությունների խարտիայում»,— պետք է ճանաչել որպես պայքարի գլխավոր մեթոդ իմպերիալիստական-սիոնիստական թշնամու դեմ և դա պահանջում է ազնիվ և ակտիվ դաշինք Պաղեստինի դիմադրության շարժման հետ»[18]։ Ելնելով դրանից, Իրաքը առաջ քաշեց «Ամեն ինչ պայքարի համար» լոզունգը[19]։

Իրաքն իր նման դիրքորոշումը բացատրում է նրանով, որ Իսրայելը չի ցանկանում արաբներին վերադարձնել իր զավթած արաբական բոլոր տարածքները, իսկ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի № 242 բանաձևը նախատեսում է վերադարձնել միայն 1967 թ. ագրեսիայի ժամանակ օկուպացրած տերիտորիաները։ Եթե հնարավոր լիներ բոլոր պահանջները բավարարել խաղաղ, այսինքն՝ քաղաքական ճանապարհով, ապա Իրաքը, իհարկե, կհամաձայներ այդ բանի հետ։ Դրա մասին է վկայում Իրաքի հեղափոխական ղեկավարության խորհրդի նախագահի տեղակալ, 1979 թ. երկրի պրեզիդենտի պաշտոնը ստանձնած Սադդամ Հուսեյնի 1972 թ. ապրիլի 13-ի մի կարևոր հայտարարությունը, որտեղ նա շեշտեց, որ Իրաքը մերժում է միայն «անարդարացի քաղաքական լուծումները»[20]։ Նա միաժամանակ ավելացնում է. «Եթե մեզ առաջարկվի արդարացի քաղաքական կարգավորում, անկախ այն բանից, թե այն վերաբերում է արաբա-իսրայելական կամ այլ կոնֆլիկտի կարգավորմանը, ապա մենք երբեք դրա դեմ հանդես չենք գա»[21]։ Եվ քանի որ, ըստ Իրաքի ղեկավարության, նման առաջարկ չի արվել, ապա նա գտնում է որ «Իրաքի

հանրապետությունը չի տեսնում այլընտրանք պայքարին և պաղեստինի ժողովրդի՝ իր երկրում ապրելու իրավունքին աջակցություն ցույց տալուն»[22]։

Կանգնած լինելով այս տեսակետի վրա, Իրաքի ղեկավարները դատապարտում էին արաբական որոշ երկրների (Հորդանան, հետագայում նաև Եգիպտոս և այլն) միտումները պաղեստինյան հարցի քաղաքական կարգավորման վերաբերյալ, որակելով դրանք կապիտուլյանտական և պարտվողական։ Այդ պատճառով էլ Իրաքի պատվիրակությունը հեռացավ 1969 թ. դեկտեմբերին Ռաբաթում (Մարոկկո) գումարված արաբական երկրների ղեկավարների 5-րդ կոնֆերանսից։ Այդ կապակցությամբ Իրաքի պատվիրակության հրապարակած հայտարարության մեջ ընդգծված էր, որ արաբական որոշ երկրներ ձգտում են պաղեստինյան հարցի խաղաղ կարգավորման և բոլոր ջանքերը չեն գործադրում ուժերի մոբիլիզացման և բոլոր հնարավորությունների օգտագործման համար թշնամու դեմ մղվող պայքարում[23]։

Նույն նկատառումներով Իրաքը ժխտական դիրք գրավեց այսպես կոչված «Ռոջերսի պլանի» նկատմամբ, որն առաջ քաշվեց 1970 թ. ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռոջերսի կողմից և այլն։

Մերժելով նման ծրագրերը, Իրաքը, ինչպես արդեն նշել ենք, հանդես էր գալիս հանուն ժողովրդական պայքարի ծավալման արաբական գրավված տարածքներում և պահանջում պաղեստինյան կազմակերպություններին ցույց տալ ամենալայն քաղաքական, նյութական և ռազմական օգնություն։ Դեռևս 1970 թ. գումարված Բաաս կուսակցության 10-րդ համազգային համագումարը խնդիր դրեց Իրաքի առջև, հասնել այն բանին, որպեսզի ժողովրդական զինված պայքարի գաղափարը մտնի Իրաքի յուրաքանչյուր տուն, գործարան և դպրոց և վերակառուցի յուրաքանչյուր մարդու, ընտանիքի, գյուղի և քաղաքի կյանքը՝ թշնամուն դիմակայելու խնդիրներին համապատասխան[24]։ Եվ 1968 թ. սկսած Իրաքը նշանակալի ջանքեր է գործադրել Պաղեստինի դիմադրության շարժմանը (ՊԴՇ) ռազմական և նյութական օգնություն և բարոյաքաղաքական աջակցություն ցույց տալու ուղղությամբ։ Բաասի իշխանության գլուխ անցնելուց անմիջապես հետո, նրա ղեկավար Բաքրը հայտարարեց, որ «Իրաքը օգնություն ցույց կտա դիմադրության բոլոր կազմակերպություններին»[25]։ Իրաքը մեծ օգնություն ցույց տվեց «Ազատագրության արաբական ճակատ» պաղեստինյան կազմակերպությանը, որը ստեղծվեց 1970 թ. Իրաքի օգնությամբ և որը գործում է Բաաս կուսակցության ղեկավարության ներքո։

Իրաքը նշանակալի, այդ թվում և ֆինանսական օգնություն է ցույց տվել «Պաղեստինի ազատագրության ժողովրդական ճակատին»[26], ինչպես նաև «Ֆաթհին»։

Իրաքի կողմից պաղեստինցիներին ցույց տրվող օգնության ձևերից մեկը Իրաքի տերիտորիայում պաղեստինյան ֆիդայիների՝ պարտիզանների վարժեցումն ու պատրաստումն էր։ Նրանք այստեղ ուսումնասիրում էին ռազմական գործը, նրանց տրվում էր համապատասխան զենք, որից հետո նրանք որպես պարտիզաններ մեկնում էին պայքարի ընդդեմ սիոնիստական օկուպանտների[27]։

Իրաքի կառավարությունը 1973 թ. ՊԴՇ-ին տրամադրեց 3 մլն. դոլար նրա ռազմական կարիքների համար[28]։ Նույն թվականին Իրաքի հեղափոխական ղեկավարության խորհրդի որոշմամբ 1 մլն դոլար մուծվեց Արաբական ֆոնդը՝ զոհված պաղեստինցիների ընտանիքներին օգնություն ցույց տալու համար։ Բացի այդ Իրաքի կառավարության և Բաաս կուսակցության ղեկավարության որոշմամբ Լիբանանի տարածքում գտնվող Նահր ալ-Բարիդ և ալ-Բադավի ճամբարներում գտնվող պաղեստինյան գաղթականներին տրամադրվեց 50 հազ. լիբանանյան լիրա, իսրայելական հարձակումներից առաջացած վերքերը բուժելու համար։ Բաց թողնվեց ևս 50 հազար իրաքյան դինար որպես օգնություն այն պաղեստինցիներին, որոնք տուժել էին պաղեստինցիների և լիբանանյան զինված ուժերի միջև 1973 թ. տեղի ունեցած բախումների ժամանակ[29]։

Եվ որպես տրամաբանական շարունակություն այս քաղաքականության, Իրաքը 1974 թ. Մարոկկոյում տեղի ունեցած արաբական պետությունների ղեկավարների կոնֆերանսում, արաբական մյուս երկրների հետ միասին ճանաչեց Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը (ՊԱԿ) որպես պաղեստինի արաբ ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ։ Եվ այս հարցում Իրաքի դիրքորոշումը ցարդ մնացել է անփոփոխ։

Սակայն միաժամանակ հարկ է նշել, որ պաղեստինյան հարցում Իրաքը թույլ է տվել որոշ վրիպումներ և անգամ սխալներ, որի մասին նշվեց Բաաս կուսակցության մարզային 8-րդ համագումարում, որը կայացավ 1974 թ. հունվարին։ Բաաս կուսակցության ղեկավարությունը ընդունեց, որ պաղեստինյան հարցում Իրաքի տված խոստումները և վերցրած պարտավորությունները ավելի մեծ էին, քան դրանց կատարման հնարավորությունները[30]։ Դրա հետևանքով առաջացավ խզում հրուշակված սկզբունքների, դեկլարացիաների և լոզունգների և նրանց պրակ-

տիկ իրականացման միջև։ Նշելով այդ հանգամանքը, մենք ի նկատի ունենք պաղեստինցիներին լայն նյութական և ռազմական օգնություն ցույց տալու, ժողովրդական զինված պայքար ծավալելու, Իրաքի քաղաքի և գյուղի կյանքի հարմարեցումը Իսրայելի դեմ մղվող պայքարին և այլ հարցեր։ Այս հարցերում Իրաքը թերացավ։ Ինչպես նշվեց 8-րդ համագումարում, Իրաքը դեռևս չլուծելով ներքին քաղաքականության բնագավառում երկրի առջև ծառացած հրատապ քաղաքական, տնտեսական և ազգային բազմաթիվ հարցեր «լայն խոստումներ էր տալիս (պաղեստինյան հարցում—Ն Հ.), որոնք ի նկատի ունեին ժամանակավոր հոգեբանական հաղթանակը, հաշվի չառնելով, որ դեպքերի զարգացումը կարող է հարկադրել նրան կատարելու իր խոստումները»[31]։

Նման պահ վրա հասավ 1970 թ. սեպտեմբերին Հորդանանում ծավալված արյունալի իրադարձությունների ժամանակ, երբ զինված մարտեր տեղի ունեցած հորդանանյան բանակի և պաղեստինյան շարժման զինված ուժերի միջև։ Այդ մարտերի հետևանքով սպանվեց մոտ 20 հազար պաղեստինցի, իսկ շատ պաղեստինցիներ էլ հարկադրված էին հեռանալ Հորդանանից։ Այդ դեպքերից հետո պաղեստինյան դիմադրության շարժումը Հորդանանում դադարեց գոյություն ունենալուց և զրկվեց հորդանանյան տերիտորիան իսրայելական օկուպանտների դեմ պայքարելու համար օգտագործելու հնարավորությունից։

Իսկ ինչպիսին էր Իրաքի դիրքը սեպտեմբերյան իրադարձությունների ժամանակ։

Այդ պահին Հորդանանում էր գտնվում իրաքյան 12 հազարանոց բանակը, որը օգնության էր եկել Հորդանանին 1967 թ. հունիսյան ագրեսիայի հետևանքները վերացնելու և հորդանանյան ճակատը կայունացնելու համար։ Սակայն իրաքյան բանակը, չնայած իրաքյան կառավարության բազմաթիվ հայտարարություններին, որ նա պատրաստ է իր բոլոր հնարավորությունները, այդ թվում ռազմական ուժերը դնել ՊԴՇ-ի տրամադրության տակ, չմիջամտեց դեպքերին և գրավեց դիտորդի դիրք։ Բասսի 8-րդ համագումարը հարկադրված էր արձանագրել, որ 1970 թ. սեպտեմբերյան իրադարձությունների ժամանակ «կուսակցությունը և հեղափոխությունը ի վիճակի չեղան գործել այնպես, որը համապատասխաներ դավադրության չափերին ու թափին և վերոհիշյալ խոստումներին»[32]։

Այս բոլորը չէր կարող բացասաբար չանդրադառնալ Իրաքի հեղինակության վրա, առաջացնելով հարաբերությունների որոշ լարվածություն արաբական որոշ երկրների և պաղեստինյան կազմակերպությունների

հետ։ Դա չի հերքում Բաաս կուսակցության ղեկավարությունը։ 8-րդ համագումարի բանաձևում շեշտված է, որ 1970 թ. սեպտեմբերից հետո «կուսակցության համբավը արաբական ժողովրդական մասսաների և արաբական ու օտարերկրյա կառավարող շրջաններում խիստ տուժեց։ Ինչ որ ժամանակ կուսակցությունը ընկավ մեկուսացման մեջ։ Նրա հարաբերությունները դիմադրության (պաղեստինյան—Ն. Հ.) որոշ շրջանակների հետ վատացան»[33]։

Սակայն հետագայում Իրաքը ձեռնարկում է որոշ քայլեր ստեղծված իրավիճակը շտկելու համար։ Նա սկսեց ավելի սթափ, իր ռեալ հնարավորություններից ելնելով, գնահատել իրադրությունը։ Ավելի իրական դարձավ նրա օգնությունը պաղեստինցիներին, որի մասին խոսվեց վերևում։

Բացի այդ, որպես դրական երևույթ պետք է նշել այն հանգամանքը, որ Իրաքի ղեկավարությունը ճիշտ դիրքերից գնահատեց Քեմպ Դևիդում 1978 թ. ԱՄՆ-ի հովանավորության ներքո Եգիպտոսի և Իսրայելի միջև կայացած գործարքը։ Նա ամբողջությամբ մերժեց Քեմպ Դևիդի համաձայնագիրը որպես սեպարատիստական գործարք, ուղղված արաբների կենսական շահերի դեմ, իսկ Եգիպտոսի պրեզիդենտ Սադաթի քայլը որակեց որպես դավաճանություն արաբների համընդհանուր գործին, և, մասնավորապես, պաղեստինցիների գործին։ Ինչպես արաբական երկրների ճնշող մեծամասության, այնպես էլ Իրաքի համար անընդունելի էր այսպես կոչված «Պաղեստինյան վարչական ինքնավարությունը», որ առաջ քաշվեց Քեմպ Դևիդում։ Նա խզեց իր կապերը Եգիպտոսի հետ և սկսեց ակտիվորեն մասնակցել համաարաբական այն միջոցառումներին, որոնց նպատակն էր չեզոքացնել Քեմպ Դևիդի գործարքի վտանգավոր հետևանքները և ապահովել Պաղեստինի արաբ ժողովրդի օրինական իրավունքները։

Н. О. ОГАНЕСЯН

ПОЗИЦИЯ ИРАКА В ОТНОШЕНИИ ПАЛЕСТИНСКОЙ ПРОБЛЕМЫ

В статье рассматривается позиция Ирака в отношении палестинской проблемы после 1968 г, когда в Ираке к власти вновь пришла партия Баас. Освещается позиция Ирака в связи с тремя ключевыми вопросами: 1. Территориальный вопрос, т. е.

какие территории следует освободить от израильской оккупации. В отличие от многих арабских государств Ирак считает, что следует освободить не только те территории, которые были захвачены Израилем в период агрессии 1967 г., но и во время арабо-израильской войны 1948 г.;

2. Вопрос существования государства Израиль. Иракские руководители считают его существование незаконным, указывая на то, что целью Израиля является экспансия от Евфрата до Нила. Исходя из этого, как зафиксировано в таком авторитетном официальном документе, как «Хартия национального действия», «главной целью арабской борьбы является ликвидация расистского агрессивного сионистского государства».;

3. Пути и методы решения палестинской проблемы. Иракское руководство исходит из того, что решение палестинской проблемы мирными или политическими средствами невозможно. Поэтому оно выступает за широкую и всеобщую вооруженную борьбу.

В статье показывается, что Ирак оказывал значительную военную и материальную помощь, а также морально-политическую поддержку Палестинскому движению сопротивления. Одновременно указывается на те ошибки и промахи, которые были допущены руководством Ирака в палестинском вопросе. В частности, отмечается несоответствие между обещаниями, данными Ираком палестинцам, и реальными возможностями их выполнения, разрыв между провозглашенными принципами и декларациями и их практическим осуществлением и т. д. Все это отрицательно повлияло на престиж Ирака и партии Баас.

Как положительный момент в позиции Ирака в палестинском вопросе следует отметить признание Ираком ООП в качестве единственного законного представителя палестинского народа, поддержка идеи создания независимого палестинского государства и правильная критика Кэмп-Дэвидских соглашений как сепаратистского сговора, направленного против жизненных интересов арабских народов.

نيكولاى هوفهانهسيان

موقف العراق من القضية الفلسطينية

يعاج المقال الحالي موقف العراق من القضية الفلسطينية بعد ١٩٦٨، حين عاد حزب البعث العربي الاشتراكي الى استلام زمام السلطة في العراق، ملقيا الاضواء على ثلاث قضايا هامة فى موقف العراق.

اولا—قضية الارض، اى ماهي الاراضي التي يجب تحريرها من الاحتلال الاسرائيلي. فالعراق، خلافالكثير من الدول العربية، يطالب ليس فقط باعادة الاراضي المحتلة بعد عدوان ١٩٦٧، وانما منذ الحرب العربية—الاسرائيلية الاولى سنة ١٩٤٨.

ثانيا—مسألة وجود اسرائيل كدولة. فالعراق يعتبر اسرائيل كيانا لاشرعيا، ويركز على اهدافها التوسعية من النيل الى الفرات. وانطلاقا من ذلك، اشار «ميثاق العمل القومي»—الوثيقة الهامة في العراق—الى ان «الهدف الرئيسي للنضال العربي هو القضاء على الكيان الصهيوني العنصري العدواني».

ثالثا—مسالة اسلوب حل القضية الفلسطينية. فالعراق لا يعتقد بامكانية الحل السلمي والوسائل الدبلوماسية للقضية الفلسطينية. ولذلك فهو يطالب بحرب تحرير شعبية طويلة الامد.

يشير المقال الى ان العراق قد بذل الكثير من المساعي باتجاه تقديم الدعم العسكري والمادي والسياسي والمعنوي لحركة المقاومة الفلسطينية. ويركز في ذات الوقت على حقيقة ان قادة العراق ارتكبوا الاخطاء بحق القضية الفلسطينية، لا سيما فيما يخص الوعود التي قدمها العراق والتي هي اعظم من امكانية تحقيقها، مما ادى الى ظهور هوة عميقة بين المبادىء العملية والممارسة الفعلية واثر تاثيرا سلبيا على سمعة العراق وحزب البعث بالذات.

كما نوه المقال بالظاهرة الايجابية المتعلقة باعتراف العراق بمنظمة التحرير الفلسطينية ممثلا شرعيا ووحيدا للشعب العربي الفلسطيني، وبدفاعه عن فكرة اقامة دولة فلسطينية مستقلة، وباد انته لاتفاقية كمب ديفيد ادانة حقة باعتبارها صفقة انفرادية وخطوة خيانية موجهة ضد حقوق العرب الشرعية.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 „The National Action Charter. Documentary Series/16/", Baghdad, 1971, էջ 54։
2 مسيرة الثورة في خطب و تصريحات السيد رئيس الجمهورية العراقية احمد حسن البكر"، بغداد، ١٩٧١، ص ١١٤։

(Այսուհետև՝ Ահմադ Հասան ալ-Բաքր, Մասիրա աս-Սաուրա)։

3 „Ministry of Culture and Information. The 17th July Revolution in Two Years", Baghdad, 1970, էջ 4.

4 „Palestine Annals. From the Archives of the Ministry of Culture and Information. Directorate General of Information. Relation Department. Republic of Iraq. 1969", Baghdad, 1969, էջ 34.

5 „Revolutionary Iraq. 1968—1973. The Political Report Adopted by the Eighth Regional Congress of the Arab Ba'th Socialist Party-Iraq", Baghdad, 1974 էջ 231.

6 Ահմադ Հասան ալ-Բաքր, Մասիրա աս-Սաուրա, էջ 9։

7 احمد حسن البكر بالثورة على طريق التقدم، بغداد، ١٩٧٧، ص ١٣٠

(Այսուհետև Ահմադ Հասան ալ-Բաքր, աս-Սաուրա)։

8 Ահմադ Հասան ալ-Բաքր, Մասիրա աս-Սաուրա, էջ 37։

9 Նույն տեղում։

10 „The National Action Charter", էջ 10.

11 „The Guardian", 6.8.1970.

12 „The National Action Charter", էջ 55.

13 Նույն տեղում։ Ահմադ Հասան ալ-Բաքր, Մասիրա աս-Սաուրա, էջ 73։

14 „The National Action Charter", էջ 10.

15 المحرر، بيروت، ١٥—٣—١٩٧٢، النداء، بيروت، ١٥—٣—١٩٧٢

16 الثورة، بغداد، ١٥—٣—١٩٧٢

17 „The National Action Charter", p. 8—10; „Revolutionary Iraq, 1968--1973..." էջ 198—204.

18 „The National Action Charter", էջ 9.

19 „Republic of Iraq. July 17th Revolution in Brief", Baghdad, էջ 6.

20 النهار، بيروت، ١٣—٤—١٩٧٢

21 Նույն տեղում։

22 „Speech of the President Ahmed Hasan al-Bakr on the Second Anniversary of the 17th July Revolution", Baghdad, 1970, էջ 18.

23 الوثائق الفلسطينية لعام ١٩٦٩، بيروت، ١٩٧١، ص ٥٣٠—٥٣١

24 „Arab Baath Socialist Party. The Political Manifesto of the Tenth National Conference (1—10 March, 1970), էջ 15.

25 „L'Monde", Paris, 6.8.1968.

26 „The Sunday Times", London, 23.8.1970.

27 „The Guardian", 6.8.1970.

28 وزارة الاعلام الثورة في عامها الخا مس، بغداد، ١٩٧٣، ص ١٦

29 Նույն տեղում։

30 „Revolutionary Iraq, 1968—1973...", էջ 200

31 Նույն տեղում, էջ 200—201։

32 Նույն տեղում, էջ 200—202։

33 Նույն տեղում, էջ 202։